ՈՒՍՈՒՑԻՉ

Աշակերտի ԱՈՒՊ-ով պլանավորված տվյալ առարկայական ծրագրի հարմարեցման, իրականացման և արդյունքների գնահատման համար առաջնային պատասխանատվություն է կրում ուսուցիչը (դասվարը, առարկայական ուսուցիչները): Այս պատասխանատվությունը սկսվում է ԱՈՒՊ-ի մշակման փուլից և շարունակվում է ԱՈՒՊ-ի իրականացման և գնահատման փուլերում: Ուսուցիչը նաև հանդիսանում է տվյալ աշակերտի համար ԱՈՒՊ-ը սահմանելու որոշման կայացման գլխավոր դերակատարներից մեկը: ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման ընթացքում տվյալ ուսուցիչը.

- մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին, դպրոցի տնօրինությանը և ծնողին տեղեկություն է տրամադրում աշակերտի առաջադիմության մասին,
- դիտարկումների միջոցով բացահայտում և մատնանշում է աշակերտի ուժեղ և թույլ կողմերը,
- մշակում է աշակերտի՝ տվյալ առարկայի տարեկան նպատակները և ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումները,
- պլանավորում և իրականացնում է աշակերտի՝ ԱՈՒՊ-ով հարմարեցված առարկայական ծրագիրը՝ ապահովելով ուսումնառության ընթացքում անհրաժեշտ հարմարեցումները, կիրառելով երեխայի կարիքին և հնարավորություններին համապատասխան մեթոդներ և միջոցներ,
- մշակում է աշակերտի առաջադիմության գնահատման մեթոդներն ու եղանակները,
- գնահատում է կիսամյակային և տարեկան արդյունքները,
- շարունակական կապ է պահպանում աշակերտի մյուս ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների և ծնողի հետ,
- առաջարկություններ է ներկայացնում կրթության առանձնահատուկ պայմանների և հարմարեցումների վերաբերյալ՝ մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներին, դպրոցի տնօրինությանը և ծնողին: